

Արձանագրություն հ.8

ԵՊՀ ՏԿՖ գիտխորհրդի /նոր կազմով/ 19.11.15 թ. կայացած նիստի

Ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 33-ը: Գիտխորհրդի 3 անդամները գտնվում են հանրապետությունից դուրս:

Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյանը:

Նիստը նախագահում էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ղարիբյանը

Օրակարգում՝ Դեկանի տարեկան հաշվետվությունը:

Բացելով նիստը և ողջունելով գիտխորհրդի նոր կազմին, պ-ն Ղարիբյանը ձայնը տվեց ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հ.Սարգսյանին, որը ներկայացրեց ֆակուլտետի գործունեությունը մեկ տարվա ընթացքում, անդրադարձ կատարելով նաև ամբիոններին /զեկուցումը կցվում է/:

Արտահայտվեցին.

Ա. Սիմոնյան, ԱԺ պատգամավոր: Ելույթս ոչ այնքան հաշվետվությանն է վերաբերվելու, որքան այն հարցերին, որին անդրադարձավ նաև պ-ն Սարգսյանը: Մի քանի շեշտադրումներից կառանձնացնեմ կարևորները: **Առաջինն** այն է, որ ներկայումս ՀՀ-ում մշակվող և ներկայացվող ծրագրերից ոչ մեկը գիտական սպասարկում և փորձաքննություն չի անցնում: Հաճախ ականատես եմք լինում ավելի շատ ավանտյուրիստական, քան թե գիտականորեն հիմնավորված ծրագրերի: Ես մինչ այստեղ գալը մասնակցում էի ԱԺ նիստին և այնտեղ ասացի հողի մասսայական սեփականաշնորհման գործընթացի ոչ արդյունավետ հետևանքների մասին: Ցավոք, մինչ այժմ այդպիսի չհիմնավորված որոշումներ դեռևս ընդունում են, օրինակ, պարտադիր աուդիտի լուծարման մասին որոշումը, որի հետևանքով ստվերային տնտեսության ծավալներն ընդարձակվել են: Դա հետևանք է նրա, որ գիտական սպասարկում չկա: **Երկրորդը** վերաբերվում է սահմանադրական տնտեսագիտության զարգացմանը, որի հիմքերի հիմքը երկրում սահմանադրականության ապահովումն է, այսինքն, թե որքանով են առօրյա խնդիրների լուծումները հիմնավորվում սահմանադրության դրույթներով: **Երրորդը**, պետք է ապահովել պատշաճ կապ ԱԺ-ի և ֆակուլտետի գիտական ներուժի միջև:

Վ.Բոստանջյան. Հարգարժան պարոն ռեկտոր, հարգարժան նախագահող, որ այսօրվա նիստի արդյունքում պետք է նշել, որ Հ.Սարգսյանի ղեկավարությամբ ֆակուլտետի գործունեությունը անչափ արդյունավետ է: Մեր ֆակուլտետը նրա ղեկանության տարիներին գնալով բարձրացնում է իր վարկանիշը, բազմաթիվ տնտեսագիտական թեքում ունեցող բուհերի առկայության պայմաններում: Մեզանից շատերին հրավիրում են բազմապիսի հարցազրույցների, որտեղ մենք արտահայտում ենք կարծիքներ, որոնք իշխանավորների կարծիքների հետ կարող են չհամընկնել, սակայն ոչ ռեկտորոքի , ոչ էլ դեկանի կողմից մեր կարծիք արտահայտելու իրավունքը չի կաշկանդվում: Եթե դեկանի աշխատանքը գնահատելու այլ չափանիշներ լինեին ես այն գերազանց կգնահատեի, սակայն ընդունված կարգի համաձայն այն կարող ենք բավարար գնահատել:

Ռ.Ալավերդյան. ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ: Ողջունում եմ բոլորիս, նոր գիտխորհրդի կազմում ցանկանում եմ հաջող աշխատանք: Մեր ֆակուլտետի ուսխորհուրդը մասնակցել է համաբուհական միջոցառումների որոնցում հաղթանակով է դուրս եկել: Կուզենայի անդրադառնել ուսանողների հուզող մի քանի հարցերի: **Առաջին** –ը վերաբերվում է մեր ֆակուլտետում պրակտիկային, որի հնարավորությունը ընդհանրապես չկա: **Երկրորդ** քննությունների անցկացման կարգին է վերաբերվում: Խոսքը արտագրությունների մասին է, որը խաթարում է օբյեկտիվ գնահատելու գործընթացը: **Երրորդը** վերաբերվում է կարգապահությանը, որի խնդիրն ունենում ենք անցակետերի բացակայության պատճառով: **Չորրորդը** համահամալսարանական բնույթ ունի, դա կուրատորների ինստիտուտի չկայացվածությունն է: Նրանք չեն իրականացնում իրենց հիմնական պարտականությունները: **Հինգերորդ,** ֆակուլտետում անգլերենի դասավանդումը ցանկալի կլիներ 2-ի փոխարեն 4 տարի դարձնել:

Գ.Ղարիբյան. Հաշվետվությունը ցույց տվեց, որ դեկանը դեկանատի հետ միասին շատ արդյունավետ է աշխատել: Սարգսյանի կառավարիչ լինելու հանգամանքը նրան օգնում է լավ աշխատեցնելու ստորաբաժանումներին: Պետք է կարողանանք գիտական թեմաների պատվերների թիվն ավելացնել: Առիթից օգտվելով դիմում եմ հարգարժան ռեկտորին առ այն, որ ՀՀ-ում անընդհատ նոր բուհեր են բացվում, որը մեղմ ասած խրախուսելի գործընթաց չէ: Երկու վտանգ կա, առաջինը, որ հանրապետության դասախոսական կազմը կարող է գործազրկության առջև կանգնել: Նոր ստեղծված բուհերը լավ սովորող ուսանողներին խոստանում են 3-րդ կուրսից սովորելու Մոսկվայի և աշխարհի այլ համալսարաններում: Ֆակուլտետը պետք է ամրապնդի

միջազգային կապերը: Ես բաժանում եմ ելույթ ունեցողների կարծիքը, որ դեկանատն աշխատել է ներդաշնակ, ֆակուլտետը գնալով բարելավում է աշխատելու որակները:

Բաց քվեարկությամբ որոշեցին դեկանի աշխատանքը գնահատել դրական:

Նիստում իր խոսքն ասաց նաև ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը: Նա համամիտ եղավ դեկանի գործունեության գնահատականին և անդրադարձավ ընդհանրապես հանրապետությունում, համալսարանում և նաև ֆակուլտետում տեղ գտած որոշ թերությունների: Նրա կարծիքով կառավարական անհիմն որոշումները իրոք առկա են, օրինակ այդ որոշումներից մեկով ստիպում են ԵՊՀ-ին, որ աշխատանքի ընդունի թվաքանակի 2 տոկոսի չափով հաշմանդամ դասախոսների, որը բացարձակ թվով կազմում է 150 հոգի, ընդ որում այդ հաշմանդամները պետք է լինեն մինչև 63 տարեկան: Սա արտուրդ է:

Աշխատավարձի նշանակալի բարձրացում մոտակա ժամանակներում չի պլանավորվում, սակայն հավելյալ վճարումների մեթոդը պետք է փոխել, այն պետք է հատկացնել միայն աշխատանքային լավագույն արդյունքներ ունեցողներին: Միայն դասախոսություններ կարդալու համար նրանք արդեն վճարվում են:

Ինձ չի ուրախացնում այն, որ որոշ բուհեր են հիմնվում ՀՀ-ում: Մեր տնտեսագիտության ֆակուլտետը 3-րդն է իր վարկանիշով: Համաշխարհային մակարդակից ետ ենք մնում, տեղում դոփում ենք, որպես ռեկտոր պահանջում եմ, որ վերանայեք ձեր ծրագրերը՝ կազմակերպչական, ուսումնական, վարչարարական առումներով:

Մենք կվերացնենք կուրատորությունը, եթե նրանք շարունակեն այդպես աշխատել:

Բիզնես դպրոց բացելու համար պետք է կադրեր ունենալ:

Գիտական դրամաշնորհների մասին: Մենք ունենք ֆակուլտետներ, որ դրամաշնորհներ են ստանում, իսկ ձեր ֆակուլտետում դա չկա: Մի բավարարվեք եղածով, իհարկե դժվար է, բայց ով է հեշտ փող աշխատում:

Սահմանադրական տնտեսագիտության կենտրոնի գաղափարը վատ չէ, բայց պետք է հստակեցնել թե ինչպե՞ս պետք է ֆինանսավորվի:

Ուզում ենք, թե չենք ուզում, անգլերենի էքսպանսիան փաստ է և անգլերենի իմացության կարևորությունը նույնպես, ի նկատի կունենանք ուսխորհրդի նախագահի առաջարկության հնարավորությունը:

Համալսարանում պրակտիկայի յուրաքանչյուր առաջարկ պետք է քննարկվի: Եթե ուզում եք դասախոս դառնալ, պետք է տքնաջանորեն աշխատել:

Ընդհանուր առմամբ ֆակուլտետը լավ է աշխատում, թերություններ չունեն միայն չաշխատողները: Պետք է ձգտել ավելի լավին, համալսարանի վաղվա օրվա համար պետք է պայքարել:

Հ.Սարգսյան . դիմելով ռեկտորին նա ասաց, որ շնորհակալ է մշտական մոնիտորինգից: Մտահոգող խնդիրներ կան, սակայն հետընթացը բացառվում է, պետք է աշխատել: Շատ որոշակի ուղեգծեր նախանշեցի իմ ելույթում և պետք է աշխատել այդ ուղղությամբ:

Նիստի նախագահող՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Գ.Ա.Ղարիբյան

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ

Ա.Հ.Համբարձումյան